

16. ԷՐԿՈՒ ՄԱԼԵՔ

Մեկ մալե՛մ գյընանց մեկ գյեղ, գյընանց նըստավ մըզգանվք: Էտա գյեղի մալի անուն էլ մալա Հանքյիմ էր:

Մալա Հանքյիմ շատ շատազրոց էր, էտա էրթըցող մալեն մալա Հանքյիմին ասաց. - Ես էսա գյիշեր լըսեցի, օր էրկնուց շան լակոտի ծեն կը գյեր:

Գյեղացիքյ ասին. - Էնի խանվքյ ա շան լակոտին վեբտի հավայի մեչ, ծեն տուր լըսեր ես:

Մալա Հանքյիմ հիմացավ, թե էնոր կասեր:

Մալա Հանքյիմ էնոր պատասխանից, ասաց. - Մալա՛, ես ու տուր էրկու խատ եղվընեկ ենքյ, կը թըռենքյ: Էրկու կարաս տեսա, մեկ քանքյ էր հըլին, մեկ էլ մեղր: Ես ընգան էն քանքյի կարաս, տուր ընգար էն մեղրին: Կարսից էլանքյ տուրս, եսն էլ էր թացվի, տուրն էլ: Ասի.«Արի զիրար լիզենք, օր չորնանք: Տուր չի լիզեցիր, ես քյե լիզեցի, չուր չորցանքյ»:

Ասին. - Տուր թանցվեր եքյ, պերեքյ ծի կըշռենքյ, խի տուր ո՞ր մեկն եքյ ծանդր:

Ձի ու քյե կըշռեցին, ես ծանդր էր, տուր թիթըվ: Իմ ամոթ կտրեցին, զարկեցին քուր ետք, կշռեցին, դուր տուր ծանդր էղար, ես թիթըվ: Քուր մորուս կընտեցին, զարկեցին իմ ետք, կըշռեցին, դուր ես ու տուր բարենբար էղանքյ: